ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4, Հեռ. 543 991, Ֆաքս 543 997, E-mail: info@anra.am

No 11-Ն-56 25.11 2016թ.

«Ինֆորմացիոն ազատության
կենտրոն» ՀԿ նախագահ
Տիկին Լիանա Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 24.11.2016թ. N 313-ի 3 հարցման հայտնում եմ, որ համաձայն «ՀՀ 2016թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հավելված 12-ի «Ավտոմեքենաների պահպանման ծառայություններ» հոդվածով ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին հատկացվել է 324000 դրամ, հաշվեկշռում գրանցված 4 ծառայողական եւ 1 հատուկ մեքենաների պահպանման ծառայությունների համար: Ծառայությունների մատուցման համար գնման ձեւ է ընտրվել բանակցային ընթացակարգ առանց հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով գնում կատարելը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 6-րդ ենթակետը եւ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 25-րդ կետի 2-րդ ենթակետը եւ 75-րդ կետը:

Միաժամանակ հայտնում եմ գնման մասին տեղեկատվությունը տեղադրված է ՀՀ կառավարության www.e-gov.am կայքի «Մեկ անձից կատարվող գնումներ» ենթաբաժնում:

Հարգանքով՝

Աշոտ Մարտիրոսյան

Ֆինանսահաշվապահական բաժին
Հեռ.543996